ԵՐԿԻՆՔԻՆ ԱՄՊԵԼ Է ЕРКИНКН АМПЕЛ Э

Allegretto dolce ♩.=66

p

Եր - կին - քը ամ - պել է, ի՞նչ ա - նուշ թոն է,

ppp

Ped. *

pp

Եր - կին - քը ամ - պել է, ի՞նչ ա - նուշ թոն է.

Ped. *

mf

գամ, դրռ - նեն անց - նեմ՝ հո - գյա - կրս հոն է.

Ped. * Ped. *

p *pp*

Գամ, դրռ - նեն անց - նեմ՝ հո - գյա - կրս հոն է: Էս:

1.2.3.4.5. 6.

Ped. * Ped. *

Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ թոն է.
Գամ դըռնեն անցնեմ՝
Հոգյակըս հոն է:

Երկինքըն ամպել է,
Գետինը թաց է.
Յարըս քնել է,
Երեսը բաց է:

Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ երակ.
Սըրտիս մեջ լըցավ
Մի բուռը կըրակ:

Երկինքըն ամպել է,
Գետին շաղերով.
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով:

Երկինքըն ամպել է,
Գետինը մութ է.
Ես քեզ ուզել եմ,
Թող ասեն՝ սուտ է:

Շորոր դու, շեկլիկ յար,
Տեսնեմ՝ դու ումն ես.
Իրավ եմ ասում՝
Դու իմ սըրտումն ես: